

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

‘ ___ ’ _____ 2014 Թ. N ___ -Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 12-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական
ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով
հ Ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող
նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության մրցութային

և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» N 12-Ն հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հրամանով հաստատված N 1 հավելվածի (այսուհետ՝ N 1 հավելված) և N 2 հավելվածի (այսուհետ՝ N 2 հավելված) 3-րդ կետի առաջին նախադասությունում.

ա) հանել <<(Երևան քաղաքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության)>> բառերը.

բ) <<ներկայացուցիչ>> բառից հետո լրացնել <<(բացառությամբ 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքի քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի (այսուհետ՝ 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմ))>>

2) N 1 հավելվածի 1.1 բաժնի վերնագիրը և 8.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1.1. 15000-ԻՑ ԱՎԵԼԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

8.1. 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի կազմն ընտրվում է այդ նպատակով համակարգչում գետեղված և պատահական ընտրված 6 թեկնածուներից՝ յուրաքանչյուր մրցույթ անցկացնելուց ոչ շուտ, քան քսանչորս ժամ առաջ՝ հետևյալ հարաբերակցությամբ.

1) մեկ երրորդը՝ համապատասխան մարզպետարանի (Երևանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի) ներկայացուցիչներ.

2) մեկ երրորդը՝ համապատասխան համայնքի ներկայացուցիչներ (համայնքի ղեկավար, ավագանու անդամներ, տվյալ համայնքի աշխատակազմի ներկայացուցիչներ).

3) մեկ երրորդը՝ գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչներ>>.

3) N 1 և N 2 հավելվածների 1.1 բաժնում <<Երևանի քաղաքապետարան>> և <<Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ>> բառերը փոխարինել <<15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմ>> բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.

4) N 1 և N 2 հավելվածների 1.1 բաժնում <<Երևանի քաղաքապետ>> բառերը փոխարինել <<տվյալ համայնքի ղեկավար>> բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.

5) N 1 և N 2 հավելվածների 8.8-րդ կետում <<<< կառավարության լիազորած պետական կառավարման մարմնից>> բառերը փոխարինել <<<< մարզպետարաններից (Երևանում՝ << կառավարության լիազորած պետական կառավարման մարմնից)>> բառերով.

6) N 1 և N 2 հավելվածների 8.10-րդ կետում <<Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի>> բառերը փոխարինել <<<< մարզպետարանների (Երևանում՝ << կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի) բառերով.

7) N 1 հավելվածի 16-րդ կետը <<եզրակացություն տալու>> բառերից հետո լրացնել <<կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին որոշում ընդունելու>> բառերով.

8) N 2 հավելվածի 1.1 բաժնի վերնագիրը և 8.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1.1. 15000-ից ավելի բնակչություն ունեցող ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

8.1. 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի ատեստավորման հանձնաժողովի կազմն ընտրվում է այդ նպատակով համակարգչում

զետեղված և պատահական ընտրված 6 թեկնածուներից՝ յուրաքանչյուր ատեստավորում անցկացնելուց ոչ շուտ, քան քսանչորս ժամ առաջ՝ հետևյալ հարաբերակցությամբ.

1) մեկ երրորդը՝ համապատասխան մարզպետարանի (Երևանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի) ներկայացուցիչներ.

2) մեկ երրորդը՝ համապատասխան համայնքի ներկայացուցիչներ (համայնքի ղեկավար, ավագանու անդամներ, տվյալ համայնքի աշխատակազմի ներկայացուցիչներ).

3) մեկ երրորդը՝ գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչներ>>:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ